ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «23» նոյեմբերի 2023 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա[1]

ԿԱՐԵՆ ԲՈՐԻՍԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 29-ի N 170-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2023 թվական նոյեմբերի 15-ի N 115-Ա և N 116-Ա հրամանները, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2023 թվականի նոյեմբերի 17-ին տրամադրված N 2/3 տեղեկանքն ու Կարեն Բորիսի Ղարիբյանի համաձայնությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության պետ (ծածկագիր՝ 18-1-27.1-Ղ3-1) Կարեն Բորիսի Ղարիբյանին 2023 թվականի նոյեմբերի 23-ից վերանշանակել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 18-4-Ղ3-1) պաշտոնին:

2. Կարեն Բորիսի Ղարիբյանի աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջներին համապատասխան:

Ս. ՀԱՅՈՑՅԱՆ